ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/78/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 3 մարտի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մարտի 3-ին քննելով Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավար Հունան Պատվականի Ռուբենյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/78/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, իրականացրել է Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավար Հունան Ռուբենյանի «Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի,

եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) ներկայացված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

1. Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում՝ չի հայտարարագրվել որդու՝ Աղասի Ռուբենյանի «ԻԶԻՎԵՅ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր լինելու վերաբերյալ տվյալը:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 5-ին Հունան Ռուբենյանին հասցեագրել է թիվ 01/494-2025 գրությունը, հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Հունան Ռուբենյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 14-ին, դրա մասին հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.3 2025 թվականի փետրվարի 19-ին պատշաճ ծանուցված Հունան Ռուբենյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 21/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հունան Ռուբենյանի միջնորդությամբ 2025 թվականի փետրվարի 21-ին, ժամը՝ 11:00-ին նշանակված գործի քննությունը տեղափոխվել է 2025 թվականի մարտի 3-ին, ժամը 16:00-ին, այդ մասին 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 01/824-2025 գրությամբ ծանուցելով վարույթի մասնակցին: Նշված գրությունը վարույթի մասնակիցը ստացել է 2025 թվականի փետրվարի 26-ին՝ հաստատումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Հունան Ռուբենյանի ներկայացուցիչ՝ Նաիրա Թորոսյանի ներկայությամբ 2025 թվականի մարտի 3-ին՝ ժամը՝ 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Հունան Ռուբենյանի ներկայացուցիչ Նաիրա Թորոսյանի կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի մարտի 3-ի թիվ 379 տեղեկանքը, որի համաձայն՝ Աղասի Ռուբենյանը 2022 թվականի մարտ ամսից բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի [redacted] հասցեում, այսինքն հոր՝ Հունան Ռուբենյանի հետ համատեղ չի բնակվում, ուստի Հունան Ռուբենյանը որդու՝ Աղասի Ռուբենյանի վերաբերյալ տվյալների հայտարարագրման պարտականություն չի կրում, որի մասին սակայն Հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ չի իմացել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/78/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն՝ Հունան Պատվականի Ռուբենյանը հանդիսանում է Ակունք համայնքի ղեկավար (https://www.kotayk-akunk.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=mer):

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Հունան Ռուբենյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների շտեմարանի, ինչպես նաև Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն՝ Աղասի Հունանի Ռուբենյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձի որդին:

3.4 ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի մարտի 3-ի թիվ 379 տեղեկանքի համաձայն՝ Աղասի Հունանի Ռուբենյանը 2022 թվականի մարտ ամսից բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի [redacted] հասցեում:

3.5 Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալների» բաժնում ներկայացված տվյալների համաձայն Հունան Ռուբենյանը հաշվառված է և միաժամանակ բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի [redacted] հասցեում:

3.6 Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում Հունան Ռուբենյանի կողմից որպես ընտանքի անդամ է ներկայացվել Աղասի Հունանի Ռուբենյանը:

3.7 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ 2022 թվականի հուլիսի 6-ից «ԻԶԻՎԵՅ» ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Աղասի Հունանի Ռուբենյանը:

3.8 Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում՝ չի հայտարարագրվել որդու՝ Աղասի Ռուբենյանի «ԻԶԻՎԵՅ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր լինելու վերաբերյալ տվյալը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.3 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

4.4 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի

կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական

հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահամված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատամամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ Հունան Ռուբենյանի կողմից Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային

կազմակերպություններում» բաժնում որդու՝ Աղասի Ռուբենյանի «ԻԶԻՎԵՅ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր լինելու տվյալը չհայտարարագրելու մասով իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Հայտարարատու պաշտոնատար անձի՝ Հունան Ռուբենյանի կողմից 2024 թվականի ապրիլի 30-ին Հանձնաժողով ներկայացրած Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում սխալմամբ ներկայացվել է Աղասի Հունանի Ռուբենյանի վերաբերյալ տվյալը, որը, սակայն, ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի մարտի 3-ի թիվ 379 տեղեկանքի համաձայն՝ 2022 թվականի մարտ ամսից բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի [redacted] հասցեում, մինչդեռ նույն Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալների» բաժնում ներկայացված տվյալների համաձայն Հունան Ռուբենյանը հաշվառված և միաժամանակ բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի [redacted] հասցեում: Նշված փաստական տվյալներից հետևում է, որ պաշտոնատար անձ Հունան Ռուբենյանը և իր չափահաս որդին (ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի տվյալների համաձայն Աղասի Ռուբենյանը ծնվել է [redacted]) մշտապես բնակվում են տարբեր հասցեներում, այսինքն համատեղ չեն բնակվում, ուստի հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումները Հունան Ռուբենյանը չափահաս համատեղ չբնակվող որդու վերաբերյալ տվյալների հայտարարագրման պարտականություն չի կրում, այսինքն՝ Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում որդու՝ Աղասի Ռուբենյանի «ԻԶԻՎԵՅ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր լինելու վերաբերյալ տվյալն Օրենքի իմաստով չի հանդիսանում հայտարարագրման ենթակա տվյալ:

Հանձնաժողովը միաժամանակ անդրադառնալով Հունան Ռուբենյանի կողմից Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում իր որդու՝ Աղասի Հունանի Ռուբենյանի վերաբերյալ տվյալը սխալմամբ ներկայացնելուն արձանագրում է հետևյալը.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված

են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) գործունեության թափանցիկությունը և հնարավոր

կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Սույն գործով հաստատված փաստական տվյալների և դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը արձանագրում է այն, որ Հունան Ռուբենյանը Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում իր հետ համատեղ չբնակվող չափահաս որդու վերաբերյալ տվյալների հայտարարագրմամբ թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված իրավախախտում՝ Հայտարարագրում անզգուշությամբ սխալ տվյալների ներկայացում: Այդուհանդերձ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հունան Ռուբենյանի կողմից Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում անզգուշությամբ ներկայացված սխալ տվյալը ըստ էության չի վտանգում Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով հետապնդվող նպատակը, այն է՝ ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավար Հունան Պատվականի Ռուբենյանի կողմից կատարված վերոնշյալ խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հունան Պատվականի Ռուբենյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հունան Պատվականի Ռուբենյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հունան Պատվականի Ռուբենյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ